

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՅՕԲԵԼԵԱՆԸ



ՅՕԳՈՒՏ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՅՕՆԵՐԻ



Մինչև այժմ՝ յօգուտ դպրոցական ֆօնդի ստացած ունեւինք 604 բուրլի, որից 112 բ. յօգուտ Կ. Պօլսի Հայոց Միացեալ Ընկերութեանց: Մնացած 492 բուրլին յանձնեցինք Թիֆլիսի թեմի առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսին՝ էջլիածնի սինօզին ուղարկելու համար:



Նոր ստացանք, երէկ, Կազիկ. Հայուհայ Բար. Ընկերութեան ուսուցիչ-ուսուցչուհիներէրի և աշակերտուհիներէրի շրջանում հանդանակված 27 բուրլին:



ՅՕԲԵԼԵԱՆԱԿԱՆ ՏՕՆԵՐԸ ԳԱՎԱՌՈՒՄ



Աստարխան, 27 հոկտ.

Մենք էլ ածնեցինք տաւերի գիւտի 1500-ամեայ և տպագրութեան 400-ամեայ մեծ յօրելանները:

Աւրօղջ յօրելանական տարվայ ընթացքում տեղական ուսն թերթիքը ևս շարունակ տպագրում էին մեծ յօրելաններին վերաբերեալ տեղեկութիւններ և այսպիսով՝ մտքով, գործով կենտրոնից կտրված աստրախանցիներին իրազեկ անում գործի դրուժեան հետ...

Դեռ անցեալ տարի, երբ ծխական ժողովներէց մէկում մի մասնաժողով ընտրվեց դպրոցական ֆօնդի համար ժողովարարութիւն անելու, միևնոյն ժողովում տնակատարութեան պարտականութիւնը զբվեց տեղիս Գրական-Գեղարուեստական Ընկերութեան մրտ:

Եւ դա ընական էր. հայ դպրոցներէց զուրկ Աստարխանում մի այդպիսի մեծ կուլտուրական տօնի հետ ծանօթացնելու պարտաւորութիւնը, անշուշտ, ընկնում էր Գրական-Գեղարուեստական Ընկերութեան վրա:

Յիշեալ Ընկերութիւնը սեպտեմբեր ամսին բաց անելով իր գործունէութեան սեզօնը՝ առաջինը զբեց մեծ յօրելաններին նուիրված մի փառասոր հայկական երեկոյթ կազմակերպելու հարցը, որը գլուխ բերելու համար որոշեց չը կանգնել ոչ մի ծախսի առաջ:

Ընկերութեան այդ առաջարկին ընդառաջ դնացին տեղական հարուստներէց մի քանիսը, որոնք և նութականապէս օգնութեան զաւով՝ նպաստեցին երեկոյթի զուխ զաւանու Ընկերութիւնը որոշեց. 1) թեմական դպրոցի երկու դահլիճները զարգարել հայկական կեանքից վերցված մեծագիր պատկերներով. 2) հրաւիրել Կովկասից աշուղներ մի խումբ. 3) սենսակներէց մէկը յատկացնել հայ պարբերական մամուլին. 4) մի ուրիշ սենսակ էլ յատկացնել հայ դրօշներին:

Բացի այդ բոլորից՝ որոշվեց տեղական ոյժերով չհասարակել մեծ յօրելաններին նուիրված մի ժողովածու, որը խմբագրելու համար ընտրվեց խմբագրական մասնաժողով:

Վերջապէս հոկտ. 19-ին տեղի ունեցաւ թեմական դպրոցի բոլոր սենսակներում մի մեծ հայկական երեկոյթի Իսկապէս աստրախանցիներէ համար դա մի նորութիւն էր.

չատ ժամանակ էր, որ այդպիսի մի երեկոյթ չէր տեսել Աստրախանը:

Մեծ դահլիճի ձակասը զարգարված էր աս. Մետրոպի և ս. Սահակի մեծազիր պատկերներով, որոնց մէջ տեղում մի մեծ շրջանակի մէջ կարված էր հայոց այբուբենը. թէ այդ պատկերները և թէ այբուբենը զարգարված էին էլեքտրական գոյնզգոյն լապտերներով: Դահլիճի արևելեան ամբողջ պատերը ընկած էր Արարատի մեծազիր պատկերով: Թեմական զարոյցի փոքր դահլիճը, որը է և միևնոյն ժամանակ Գրական-Փեղարուեստական Ընկերութեան դահլիճը, ամբողջովին զարգարված էր գորգերով և հայկական կեանքից վերցված իւզաների պատկերներով. այգանդ կար նաև գիւղական մի փոքրիկ խճուխ:

Այնուհետև սենեակներից մէկի պատերից կախված էին համարեա բոլոր հայ պարբերական հրատարակութիւնները (Թիւրքիայի, Պարսկաստանի, Եւրոպայի և Ռուսաստանի), իսկ մի ուրիշ սենեակում կախված էին մեք աչքի ընկնող հայ գրողների պատկերները:

Երեկոյթը բացվեց Ս. ք. Ասլանեանի բեֆերատով՝ տառերի գլխաւի և սպազբուլթեան մեծ յօրելեաններին նուիրված:

Այնուհետև տեղի ունեցաւ հայ բարբառների ընթերցումը, բարբառին համեմատ տարազով: Մեծ ուշադրութեան արժանացաւ Ալեքսանդրօպոլից հրաւիրված Գրիգոր Տալեանի (Կոկոր) առաջական խումբը, որը նուազեց թատի վրա և երգեց բողմաթիւ ժողովրդական երգեր: Ուշադրութեան արժանացան նոյնպէս մեր երկու երիտասարդ երաժիշտները՝ Դեմուրեանի և Մալիլեանի ներդաշնակած ժողովրդական երգերը, որ բաւական մեծ աջողութեամբ կատարեց երգեցիկ խումբը Արշակ Էկիսանեանի ղեկավարութեամբ. երգեցին «Քսոս վան», «Կանաչ-կարմիր» և այլն:

Երեկոյթի երրորդ բաժանումը ամբողջովին բազկեցած էր հայկական պարերից: Ընդարձակ բեմի վրա մի խումբ հայ աղջիկներ և տղաներ հայկական տարազներով պարում էին թէ խմբական և թէ սօսօ պարեր:

Չափազանց մեծ ոգևորութիւն պատճառեցին աստրախանցիներին այդ պարերը. անընդհատ ծափահարութիւններով ժողովուրդը շարունակ յայտնում էր պարողներին իր գոհունակութիւնը:

Երեկոյթի այդ բաժինները վերջնապէս յետոյ՝ սկսվեցին եւրօպական պարերը, որոնք տեսցին մինչև ժամը 4-ը:

Սենեակներից մի քանիսում կային ընդարձակ բուֆետներ, որտեղ ի միջի այլոց մատակարարում էին խորոված:

Հաւաքված հազարի բազմութիւնը լաւ սովաւորութեան տակ հեռացաւ երեկոյթից: Ծնորակալութեան արժանի է, անպայման, Գրական-Փեղարուեստական Ընկերութեան նախագահ Ռ. Աստուածատրեանը, որի անպառ եռանդի արդիւնքն էր այդ մեծ երեկոյթը:

Միւս անգամ կը գրեմ զպրօցական Փօնդի մասին Ս. ք. Ասլանեանց

Կիրակի, ամսիս 13-ին, եկեղեցական արարողութիւններէր յետոյ հասարակութիւնը հրաւիրվեց տեղիս ծխ. զպրօցը, որտեղ զպրօցի վարժուհի տիկ. Կախեանը բացատրեց տառերի գլխաւի և սպազբուլթեան սկզբնաբուլթիւնը: Ապա սկսվեց աշակերտական գրական հանդէսը երգեցողութեամբ:

Ի վերջոյ հանդէսը փակեց աւ.-ուսուցիչ Բ. Կախեանը, որը բացատրելով զպրօցի նշանակութիւնն ու կարևորութիւնը մանաւանդ հայերիս համար, կոչ արեց հասարակութեանը սերտօրէն կապվի զպրօցին և անկուսից պաշտպանել միշտ այն Հէնց այստեղ յօգուտ զպրօցական Փօնդի հաւաքվեց 15 ք. և ուղարկվեց Ելմիխածին:

Հանդէսը վերջացաւ բաւական ուշ, սակայն հասարակութիւնը գոհ սրտով հեռացաւ զպրօցի սրահից:

Միք. Կիրակեան

III
Տաշքենտ, 25 հոկտ.

Ամսիս 13-ին տեղիս հայոց եկ.-ծխ. զպրօցի և աղօթատան բակում, պատարակեց և հայրապետական մալթանքից սնմիջապէս յետոյ, տեղի ունեցաւ հայոց տառերի գլխաւի և հայկական սպազբուլթեան յօրելեանական ազգային հանդէսը:

Թէև զպրօցի հոգաբարձութիւնը, ըստ երևոյթի, որոշել էր հանդէսը կատարել զպրօցի դահլիճում, որի համար և զարդարել էր շքեղօրէն դահլիճը, բայց սրահի փոքրութեան պատճառով տօնակատարութիւնը տեղի ունեցաւ բակում:

Իսկը լիքն էր երկես հասարակութեամբ և հայ աշակերտութեամբ: Ծխատէր Ս. ք. Տէր-Մկրտչեանը բանալով հանդէսը՝ խօսեց տառերի գլխաւի և նրա նշանակութեան մասին:

Ապա խօսք առաւ գաղութիս ծխ. զպրօցի աւ.-ուսուցիչ Ա. Միրզայեանը և խօսեց սպազբուլթեան կատարած դերի և հայկական սպազբուլթեան պատմութեան մասին:

Բանասխօտութիւններին յաջորդում էին զպրօցի սան-սանուհիների մանկական երգերն ու ոտանաւորները, որոնք ընդհատվում և ողջունվում էին բուն ծափահարութիւններով:

Տօնական ծրագիրը վերջնապէս յետոյ՝ խօսեց հոգաբարձութեան ներկայացուցիչ Տիգ. Յովսէփեանը գաղութիս ծխ. զպրօցի ծագման ու զարգացման մասին, որին յաջորդեց հոգաբարձութեան նախագահ Յ. Թաղեանեան և յայտնեց, որ հոգաբարձութեան կողմից Վեհ. Հայրապետին ուղարկված է շնորհաւորական հեռագիր:

Հանդէսից յետոյ պատական զպրօցների բարձր գոտատան հայ աշակերտներն ու աշակերտուհիները հիւրասիրվեցին թէյով, իսկ վոքերը և հիւր երեխաները՝ ծխ. զպրօցի երեխաների հետ միասին՝ չոր մրգերով: Հանդիսականները հեռացան գոհ սրտով և ուրախ արամադրութեամբ, մանաւանդ ծնողները, որոնց երեխաները այդ հանդէսի աչքն էին իրանց երգերով ու ոտանաւորներով:

Խարիւտեցի Գօլի